

«Վեգանության մոտիվացիան եւ նրա բնապահպանական հիմքերի
խաչմերուկները սննդակարգում միս օգտագործող անձանց
մոտեցումներում»

Հետազոտություն

Հետազոտող՝ Արտակ Ադամ



**«Վեգանության մոտիվացիան և նրա բնապահպանական
հիմքերի խաչմերուկները սննդակարգում միս օգտագործող
անձանց մոտեցումներում»**

Հետազոտություն

«Էկո բազմազանություն» երիտասարդական, կրթական նախաձեռնություն
Հետազոտող՝ Արտակ Ադամ

ԵՐԵՎԱՆ 2020

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Բովանդակություն

Հետազոտության մասին

Հետազոտության մեթոդաբանություն

Հետազոտության արդյունքներ

Առաջարկություններ

Հավելված

Հետազոտության գործիք

ՀԵՏԱԳՈՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Սույն հետազոտության նպատակն է ներկայացնել երկու կողմերի՝ այս դեպքում վեզան նույնականացող (այսուհետե՛ս՝ վեզան) եւ սննդակարգում միս օգտագործող անձանց մոտեցումներն ու համոզմունքները վեզանության, բնապահպանության մասին եւ նրանց միջեւ գոյություն ունեցող հարցերը, կոնֆլիկտները:

Հետազոտության արդյունքների ներկայացման մեջ արտացոլված եւ ամփոփված են միայն վերը նշված շահակից կողմերի տեսակետները՝ երկու հատվածով, որոնցից առաջինում ներկայացվում են կողմերի իրազեկվածությունը ներքոնշյալ հարցերի շուրջ, իսկ երկրորդ մասում ներկայացվում են կողմերի՝ միմյանց նկատմամբ վերաբերմունքն ու մոտեցումները:

Հետազոտության «Առաջարկություններ» բաժինը հիմնված է հետազոտության հեղինակի՝ խնդրի շուրջ դիրքորոշումների, հետազոտության շրջանակում ձեւավորված տեսակետի հիման վրա:

Հետազոտության կառուցման հիմքում շահակիցների մոտեցումների շրջանակն է, եւ չեն ուսումնասիրվել առանձին աղբյուրներ եւ հետազոտություններ: Ելնելով հետազոտության նպատակից՝ առանձնացվել են հետևյալ խնդիրները.

- Ուսումնասիրել վեզանների՝ այդ կենսակերպին անցնելու դրդապատճառները:
- Ուսումնասիրել սննդակարգում միս օգտագործող անձանց մոտեցումները վեզանության ու բնապահպանության շուրջ:
- Վեր հանել երկու կողմերի միջեւ գոյություն ունեցող հարցերին, կոնֆլիկտներին առնչվող մոտեցումները:

Սույն հետազոտության առանձնահատկությունը կայանում է նրանում, որ այն ունի նկարագրական, հետախուզական բնույթ եւ առաջնային հետազոտություն է՝ հիմնված շահակիցների (վեզաններ, բուսակերներ, սննդակարգում միս օգտագործողներ) դիրքորոշումների, մոտեցումների վրա:

Միեւնույն ժամանակ, հետազոտությունը չի կրում ներկայացուցչական բնույթ, սակայն հնարավորություն է տալիս պատկերացում կազմելու հետազոտությամբ առաջ քաշված հարցադրումների մասին:

Հետազոտության իրականացման ընթացքում շեշտադրվել են անձանց մոտեցումները, զգայունությունը, կոնֆլիկտայնությունը, ինչպես նաեւ իրազեկվածությունը բնապահպանության, վեզանության ու մարդկանց հիմնարար ազատությունների մասին:

Հետազոտության ընթացքում խոսվում է վեզան կենսակերպին անցնելու ոգեշնչման, դրդապատճառի մասին, ինչպես նաեւ կենդանասիրության, կենդանիների իրավունքների տեսության մասին, որոնք սահմանում են կենդանիների ազատությունները եւ մարդկանց հետ համատեղ ապրելու իրավունքը:

Հետազոտությունն անդրադառնում է նաեւ վեզան կենսակերպին չանցնելուն, վեզանության շուրջ անձանց մտորումներին, կողմերի հանդուրժողականությանը և սոլիդարությանը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության թիրախային խմբում ընգրկվել են վեգան եւ սննդակարգում միս օգտագործող անձիք:
Ելնելով հետազոտության նպատակից եւ խնդիրներից՝ դրա շրջանակում կիրառվել է հարցազրույցների իրականացման մեթոդը:

Հարցազրույց անցնող անձանց ընտրությունը.

Հետազոտության շրջանակում իրականացվել է թվով 14 հարցազրույց, որոնցից յոթը՝ վեգան, մյուս յոթը՝ սննդակարգում միս օգտագործող անձանց հետ:

Մյուս կողմից ելնելով հետազոտության նպատակներից ու խնդիրներից, հաշվի չեն առնվել շահակիցների կրոնական, ազգային, սեռային, սեռական եւ այլ պատկանելությունները, քաղաքական կամ այլ գաղափարները, բժշկական, գենետիկական, լեզվական առանձնահատկությունները, տարիքը, ամուսնական կամ ընտանեկան, սոցիալական ծագման կարգավիճակները, գենդերային ինքնությունը, արտաքինը եւ այլն: Այսինքն՝ շահակիցների ընտրությունը կախված է եղել միայն նրանց վեգան լինելու կամ սննդակարգում միս օգտագործելու հանգամանքից:

Հետազոտության ընթացքում պահպանվել է հետազոտության մասնակիցների անձնական տվյալների գաղտնիության ապահովման սկզբունքը:

Գործիքի մշակում

Հետազոտության մասնակիցների համար կազմվել է համապատասխան հարցաշար, որը ներկայացված է սույն աշխատանքի «Հավելվածներ» բաժնում:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Հետազոտության առաջին մասում անդրադառնալով կողմերի իրազեկվածությանը բնապահպանության, վեգանության եւ հարակից հարցերին, կարելու է առանձնացնել այն դրդապատճառները, որոնք հիմք են հանդիսանում վեգան կենսակերպին անցնելու համար: Հիմնվելով հնչեցված կարծիքների, պնդումների վրա, դրդապատճառները խմբավորվել են թե՛ անհատապես, ընդհանրացվելով, թե՛ ոլորտային մոտեցմամբ:

Այսպիսով, հաշվի առնելով յուրաքանչյուր վեգանի մոտիվացիան, առանցվացվում են՝

- կենդանիների հանդեպ սերը,
- անարդարության մասին մտորումները,
- բնությանը նվազագույն վնաս հասցնելը,
- կենդանիների շահագործումը,
- կենդանիների իրավունքները,
- կենդանիների ազատությունները,
- բնապահպանական խնդիրները,
- անասնաֆերմաների գոյությունը, կաշվեգործությունը, անասնապահության ծանր ազդեցությանը էկոլոգիայի ռեսուրսների վրա,
- գլոբալ տաքացումը,
- Էթիկան՝ բնության, կենդանիների, մարդկանց նկատմամբ:

Ոլորտային առումով, դրդապատճառներն են՝

- բնապահպանությունը,
- կլիմայական փոփոխությունները,
- կենդանիների իրավունքները:

Հետազոտության արդյունքները պարզ են դարձնում, որ վեգանները վստահ են իրենց մոտեցումներում, իսկ պնդումներն առավել հիմնավորված են եւ ունեն ուսումնասիրության երկարատեւ ու խորը հիմքեր: Այսինքն՝ վեգաններն առավել իրազեկ են վերելում նշված ոլորտների շուրջ:

Վեգաններից հինգը հիմքեր են ներկայացրել աղբյուրների տեսքով, հիմնավորելու իրենց պնդումները: Մյուս կողմից վեգաններն առավել զգայուն են բնապահպանության, կենդանիների հետ առնչվող հարցերի շուրջ եւ նրանց դրդապատճառներում գերակա դիրքում են գտնվում թե՛ կենդանիների իրավունքները, թե՛ բնապահպանությունը:

«1 կգ կովի մսի ստեղծման համար պահանջվող ջրային պաշարը կազմում է 9500 լիտր, որի մասին առավել մանրամասն խոսվում է «Cowspiracy» փաստաթղթի վերաբերյալ ֆիլմում»
վեգան մասնակից

Վեգանների պնդումները, հիմնվելով կենդանիների իրավունքների տեսության վրա, անդրադառնում են կենդանիների ազատությանը: Կենդանիները չեն պատկանում մարդկանց եւ նրանց ուտելը հավասարազոր է մարդակերությանը: Բնապահպանության տեսանկյունից, նրանք հստակեցրել են, որ վեգան լինելով արդեն իսկ մասշտաբային օգնություն են տրամադրում բնությանը: Մյուս կողմից, նրանք հավելում են, որ վեգանությունն օգնում են լուծել բնապահպանական մի շարք խնդիրներ, այդ թվում այն, որ չեն նպաստում անասնաֆերմաների գոյությանը, կաշվեգործությանը, անասնապահության ծանր ազդեցությանը էկոլոգիայի ռեսուրսների վրա, գլոբալ տաքացմանը:

«Երբ հետաքրքրվեցի մսարտադրության գործընթացով, գիտակցեցի, որ հիպոկրիտություն է մի տեսակ կենդանուն սիրելը. իսկ մյուս տեսակին սպանել եւ ուտելը»
վեգան մասնակից

Վեգանության գաղափարախոսությունն անդրադառնալով ոչ միայն սննդակարգին, նաեւ առանձնացնում է բնությանը մասշտաբային վնաս հասցնող այլ հանգամանքներին, օրինակ՝ ֆերմաներին, կաշեգործարաններին եւ այլն, եւ չի կարող չներառել բնապահպանությունը, եւ բնության համար գործունեությունը: Այս հարցում վեգանները համակարծիք են:

«Այդպիսիք նպաստում են մեթան գազի՝ CO2-ի արտանետմանը մթնոլորտ, հատկապես ներքին հատված, որը նաեւ քայքայում է օզոնային շերտը: Իսկ այդ գազն առավել արտադրվում է կենդանիների արտաթորանքից, որը չի վերաձակվում, քան մեքենաների արտանետումներից, կամ գործարաններից, որոնք տարբեր այլ թունանյութեր են արտանետում:»
վեգան մասնակից

Այսիպիսով հանգում ենք նրան, որ մասնակից վեգաններն ուսումնասիրել են վեգանությունն ու հարակից այլ թեմաները, այդ թվում՝ սննդակարգը, առողջ ապրելակերպին առնչվող մի շարք հարցեր, բնապահպանության հետ առնչվող այլ հարցեր: Ավելին՝ նրանցից երկուսը նշեցին, որ վեգանության տարածված «բացասական կողմերի» մասին ոչ մի տեղեկատվություն չեն գտել, որը կարող է աղեկվատ մարդու համար համոզիչ լինել:

«Կարմիր կամ մշակված միսը, ցանկացած չափաբաժնով քաղցկեղածին է: Կենդանական յուղերը, ճարպերն առողջության վրա վատ են անդրադառնում, հատկապես խոլեստերինի հետ կապված կամ սրտանոթային հիվանդությունների հարցերում, նաեւ այն, որ տապակած մսերը կամ յուղերն առաջացնում են գիրություն, որը շատ հաճախ վնասակար է: Այս հարցերի մասին «Առողջապահության Համաշխարհային Կազմակերպության» կայքում կան հետազոտություններ, որոնք գիտական են համարվում:»
վեգան մասնակից

Ուսումնասիրելով սննդակարգում բացառապես վեգան մոտեցումը, հետազոտության արդյունքները պարզ են դարձնում, որ վեգան լինել, դեռ չի նշանակում առողջ սննդակարգով ապրել: Մասնակիցներից շատերն օգտագործում ենք շաքար, նույնիսկ մի քանիսն ավելի, քան անհրաժեշտ է, բուսական արագ սնունդ, գազավորված կամ այլ արհեստածին հավելումներով հյութեր եւ այլն: Քանի որ վեգանությունն ուղղակիորեն

կապվում է առողջ ապրելակերպի հետ, ինչպես հաճախ նշվում էր վեգան մասնակիցների կողմից, ուսումնասիրվեց նաև այդ մոտեցումը: Արդյուքում, պարզ դարձավ, որ վեգան լինել դեռևս չի նշանակում առողջ ապրելակերպով կամ առողջ սննդակարգով ապրել:

Ուսումնասիրելով բնապահպանության մասին իրազեկվածությունը, մոտեցումները եւ հետազոտության գործիք հարցաշարում ներառված հարցերին անձանց պատասխանները, հանգում ենք նրան, որ վեգանները հիմնականում նույնականում են նաեւ թե՛ գաղափարապես, թե՛ գործող բնապահպաններ, քանի որ վեգանությունն ունի բնապահպանական լուրջ առավելություններ, հաշվի առնելով բնության նկատմամբ անձանց մոտեցումները, մարտադրությանը, կաշվե կամ մորթե իրեր արտադրելուն չնպաստելը, աղտոտվածության մասին առավել տեղյակ լինելը եւ այլն:

Այնուամենայնիվ, ոչ բոլոր վեգան մասնակիցներն էին իրենց լիովին համարում բնապահպաններ: Ոմանք՝ հիմնականում, կամ ավելի շուտ այո, քան ոչ: Մյուս կողմից նրանք շարունակական ուսումնասիրությունների եւ գործողությունների մեջ են հանուն կենդանիների եւ բնապահպանության:

Վերոնշյալ հարցերի շուրջ, սննդակարգում միս օգտագործող անձինք առավել քիչ իրազեկված են, եւ նշում են, որ կա՛մ նրանց հետաքրքրությունների մեջ չեն մտել այս ուսումնասիրությունները, կա՛մ կարիք չեն ունեցել: Մասնավորապես, նրանք պնդում են, որ բնությանը վերաբերվում են չեզոք, այդ թվում նաեւ բնապահպանությունը, սակայն տարբեր գործոնների ազդեցությունները, կնախընտրեին որ չլինեն, օրինակ հանքերը, կամ մեզապոլիսները: Սակայն, հնարավորության դեպքում, նրանք եւս չեն աղտոտում բնությունը, օրինակ պլաստիկ շշերը նետում են աղբամանը, ոչ թե գետնին եւ այլն: Հիմնականում բնության վրա բացասաբար ազդող գործոնների, բնապահպանության, վեգանության մասին ինֆորմացիա ձեռք են բերել կամ լսել վեգան, բնապահպան ընկերների, ծանոթների շրջանակներից, ինչպես նաեւ սոցիալական ցանցերում տարբեր միջոցառումներին մասնակցություն ունենալու եւ ոչ ֆորմալ կրթության միջոցով:

Հարցվող անձանցից միայն մեկը, վստահաբար նշեց, որ բավականին ուսումնասիրել է թե՛ վեգանությունը, թե՛ բնապահպանությունը, եւ թե՛ կենդանիների իրավունքները:

Մեծամասամբ, սննդակարգում միաս օգտագործող անձինք կողմ չեն բնության վատթարացմանը, կենդանիների շահագործմանը, սակայն սննդակարգում փոփոխություններ կատարելուն եւս կողմ չեն: Վերջին անձը նշեց, որ մարդիկ այն են, ինչ ուտում են: Այսինքն, եթե մարդը բնության մաս է, ուրեմն նրա սնունդն էլ պետք է բնության մի մասը լինի:

Հանդես գալով լիովին տարբեր մեկնաբանություններով, սննդակարգում միս օգտագործող միայն մի անձ նշեց, որ համարում է իրենց բնապահպան:

Հիմնականում, ոչ վեգան անձինք փորձում են լինել զգայուն, չաղտոտել բնությունը, սակայն խորությամբ ուսումնասիրելու կամ բնապահպանական դիրքերից հանդես գալու կարիք կամ ձգտում չունեն: Սա պայմանավորված է հիմնականում անձանց հետաքրքրություններով և կարիքներով: Եթե հարցազրույց անցնող վեգանների մեծ մասը ակտիվ գործում են բնապահպանության ոլորտում, իսկ երեքը նաեւ ակտիվիստներ են, ապա մյուս կողմի դեպքում, անձինք պարզապես զբաղվում են իրենց մասնագիտական, կամ սիրելի աշխատանքով, զբաղմունքով: Սա հանգեցնում է նրան, որ կրկին կարող ենք պնդել, թե հետաքրքրություններն ու մարդկանց տարբերություններն են հանդիսանում վեգան կամ ոչ վեգան լինելու, բնապահպանությամբ զբաղվելու կամ չզբաղվելու դրդապատճառները:

«Փորձում եմ բոլոր հնարավոր ձևերով եւ միջոցներով մինիմալի հասցնել այլաստիկի եւ այլ ռեսուրսների
օգտագործումն, այդ թվում նաեւ միսը, կամ կենդանական ծագում ունեցող սնունդը: Իմ
համապատասխանեցմամբ, տարվա ընթացքում 100-ից 4 տոկոս միս եւ օգտագործում, եւ մի քիչ ավելի շատ
այլ կենդանական մթերքներ:»
սննդակարգում միս օգտագործող անձ

Բնապահպանության եւ վեգանության մասին իրազեկվածությունը չկարևորելով կամ քիչ կարևորելով, սննդակարգում միս օգտագործող անձինք այնուամենայնիվ փորձում են լինել առավել հոգատար իրենց շրջապատի հանդեպ:

Սննդակարգում միս օգտագործող անձինք, հետազոտության գործիք հանդիսացող հարցաշարի պատասխանների վրա հիմնվելով, հանդես են գալիս հասարակության մեծամասնության կողմից որդեգրված դիրքորոշումներով, քանի որ նրանք պնդում են, որ թե՛ վեգան անձինք, թե՛ բնապահպանները միշտ էլ եղել են թվով շատ քիչ, սակայն բոլորը համակարծիք են այն պնդման հետ, որ բնության հանդեպ հոգատարությունը պետք է սերմանված լինի բոլոր քաղաքացիների ու անձանց մեջ, այդ թվում աշխարհի բոլոր երկրներում ու պետություններում: Մյուս կողմից, բնությունը ստեղծված է, կա ու կլինի, այսինքն՝ բնությունն իր բնական կյանքով ապրում է, իսկ մարդը ևս գիշատիչ և նա հին ժամանակներից սկսած օգտագործել է միսը՝ որպես սնունդ:

Մասնակիցներից միայն մեկը նշեց, որ վեգանության գաղափարներ ունեցողների նկատմամբ վերաբերմունք չի ցուցաբերում, քանի որ ինքնանպատակ է համարում վեգանությունը, որից էլ հետևություն, որ կարիք չունի ուսումնասիրելու ցանկացած հարց վեգանության հետ կապված, սակայն ոչ սննդակարգի կամ բնապահպանության մասին:

Հիմնվելով հարցվող անձանց պատասխանների վրա, սննդակարգում միս օգտագործող անձանց մեծ մասը մոտ է ունենալու բնապահպանական խորը գաղափարներ, այն դեպքում, երբ դեռ խորը ուսումնասիրություններ չեն կատարել ոլորտի շուրջ: Նրանց մոտեցումներն առավել տարրական մակարդակի վրա են գտնվում եւ գաղափարական են: Սա, նշանակում է, որ հարցվողների այս խումբը հանդես չի գալիս որպես ոլորտում գործող խումբ, նույնիսկ ակտիվ կամ պասիվ:

Թե ինչ կոնֆլիկտների կամ վերաբերմունքի են բախվում կողմերը, վեգանները նշել են, որ նրանց կյանքում բազմիցս եղել են իրենց ուղղված այլատյացության կամ քսենոֆոբիայի դեպքեր, հավելելով, որ կապ չունի թե ինչ կերպ ես տարբերվում մյուսներից, նույնիսկ վեգան լինելու դեպքում հանդիպում են այդ խնդրին: Հարցվողներից շատերը նշել են, որ նույնիսկ վիրավորանքներ են ստացել, խտրականացվել կամ արժանացել առհամարանքի:

Մասնավորապես, սննդակարգում միս օգտագործողները կարծում են, որ վեգան լինելը պարզապես սահմանափակում է սննդակարգում ու դժվար, մագոխիստական կյանքի ձգտում: Կամ այն, որ վեգանները սիրում են կենդանիներին առավել, քան մարդկանց, ավելին՝ մարդկանց ատում են: Հաճախ վեգան անձանց նմանեցնում են նաեւ «Եհովայի վկա» կրոնական կազմակերպության անդամների հետ, որովհետեւ կենդանական ծագում ունեցող սննդամթերք չուտելու համոզմունքին հավատարիմ են, ինչպես նրանք, կամ այլ ցանկացակ կրոնական այլ հայացքներ ունեցող անձ:

Մյուս կողմից հաճախ մասնագիտական ոլորտներում աշխատող ոչ վեգան մարդիկ բերում են տարրական, չհիմնավորված պնդումներ, որ բուսական ծագում ունեցող սննդից չեն կարող ստանալ բոլոր օգտակար վիտամինները, այն ինչ, միայն B12 վիտամինն է, որ չեն կարող ստանալ ոչ կենդանական ծագում ունեցող սննդից, որը հողից կենդանու օրգանիզմ է անցնում, սակայն այդ վիտամինը կարող են ձեռք բերել դեղատներից կամ բժշկական կազմակերպություններից: Վիտամինն օրգանիզմին անհրաժեշտ է միջինում յոթ տարին մեկ անգամ: Չնայած այս միջին վիճակագրական տեղեկատվությանը, հաճախ B12 վիտամինը անհրաժեշտ չի լինում մարդու կայուն կենսագործունեության համար:

Հարցվողների պատասխաններում ակնհայտորեն տեսանելի են առնվազն վիրավորական, կամ առհամարական մոտեցումներն իրենց նկատմամբ թե՛ հարազատների, ընտանիքի անդամների, թե՛ ընկերների կամ գործընկերների ու այլոց կողմից: Վիրավորական դրսևորումներն արտահայտվում են հիմնականում ծաղրանքի, թեթեւ հայհոյանքի տեսքով, իսկ առհամարական վերաբերմունքն արտահայտվում է խմբերում չներառելու, զգայուն չլինելու, օտարելու տեսքով: Հարցվողների պատասխաններում տեսանելի են մի քանի դեպքեր, որոնք ակնհայտորեն փաստում են առհամարական վերաբերմունքը, որը հազվադեպ դեպքերում նաեւ բռնության դրսևորում է ունեցել:

«Երբ բուսակեր էի, ընտանիքս ավելի թեթեւ էր նայում իմ մոտեցումներին, բայց երբ վեգան դարձա, նրանք դիտավորյալ ինձ համար կերակուր չէին պատրաստում, կամ մտածված օգտագործում էին կենդանական ծագում ունեցող սննդամթերք: Մեր տանը սկսեցին ավելի շատ պատրաստվել մսով ապուրներ եւ այլն: Որոշ ժամանակ անց, ծնողներս գումար էլ չէին տրամադրում ինձ, իմ սիրելի սնունդը գնելու համար: Մտիպված եղա սովորելու ընթացքում նաեւ աշխատել:»
վեգան անձ

Վերոնշյալ մեջբերումը փաստում է տնտեսական բռնության մասին, որը դրսևորվել է անձի նկատմամբ նրա վեգան լինելու հանգամանքով:

Վեգաններից շատերը նշեցին, որ հումորով, մատների արանքով են նայել իրենց մոտեցումներին, այն դեպքում, երբ հարցազրույց անցնողներից մեկը նշեց, որ ոչ վեգան անձանց վերաբերում է հասկանալով, քանի որ, մեծամասամբ, մեզանից ոչ մեկ վեգան չի եղել ի սկզբանե: Ամենամեղմ պարագայում գոնե զարմանքի վերաբերմունք է եղել անձանց վեգան լինելու փաստն իմանալու դեպքում: Իսկ մասնակիցներից մեկն առավել շեշտադրեց, որ մարդիկ գնալով զարգանում են եւ առավել բարձր գիտակցություն են ունենում:

Այսպիսով, հետազոտությունը ցույց է տալիս, որ անձանց վեգան լինելու հանգամանքն անարձագանք չի մնում: Հակառակ կողմի վերաբերմունքը լինում է ոչ խորը բռնությունների ձեւով, հիմնականում թեթեւ դրական, կամ թեթեւ բացասական: Սակայն, առկան են նաեւ դեպքեր, որոնք շարունակական են եւ հոգեբանական վնասներ են հասցնում վեգաններին:

Իսկ թե ինչպես են վերաբերվում վեգանները մյուս կողմին, հետազոտությունը պարզ է դարձնում, որ առանձնակի բացասական վերաբերմունքի դրսևորումներ չեն եղել: Հիմնականում վերաբերվում են նորմալ, հարգում են մարդկանց ընտրություններն ու ազատությունները, կամ չեզոք վերաբերմունքի են արժանացնում: Սակայն, պատասխաններում նաեւ տեսանելի է այն հանգամանքը, որ կենդանիների շահագործման, զլոբալ տաքացման եւ բնապահպանության տեսանկյունից նայելով, նրանց վերաբերմունքում տեսանելի են թեթեւ

բացասական տատանումներ մյուս կողմի սննդակարգի, աշխարհայացքի, գաղափարների եւ արժեմակարգերի նկատմամբ:

Երկկողմանի կարեւորություն տալով մարդկանց ազատություններին, նրանց ընտրություններին, շահակիցներից՝ սննդակարգում միս օգտագործող անձանց կողմի պատասխաններն այլ ուղությամբ են գնում: Հետազոտության այս կողմից ակնհայտ ճնշումներ, բռնություններ, վիրավորանք, կամ բացասական վերաբերմունք նկարագրող ոչ մի պատասխան չստացանք: Այնուամենայնիվ, մասնակիցների պատասխաններում տեղ գտավ «ագրեսիվ վեգան» արտահայտությունը, որոնց հոգեբանական ճնշումները ստիպում են չօգտագործել կենդանական ծագում ունեցող սնունդ: Մասնակիցներից միայն մեկը նշեց, որ իրեն անհարմար է զգում, երբ օրինակ ինչ-որ բան է հյուրասիրում վեգան անձի, վերջինս՝ հրաժարվում է ընդունել: Կամ, կա տեսակետ, որ վեգանները «վերելից են նայում» մյուսներին: Շահակից այս կողմը հիմնականում ոչ մի տեսակ խնդիրների չի բխվել: Նրանց վերաբերմունքում, սննդակարգում միս օգտագործող անձինք, չեն ներկայացնում որևէ արտասովոր մոտեցում, նշելով, որ մարդիկ ազատ են ուտելու այն, ինչ ուզում են, լավ են վերաբերվում, քանի որ բոլորին էլ լավ են վերաբերվում, կամ վերաբերվում են սովորական: Այսինքն, հարցվողների այս խումբը մեծամասամբ կարևորում է մարդու ընտրությունները: Ավելին՝ մասնակիցներից մեկն ավելացրեց, որ շատ լավ է վերաբերվում վեգաններին, հարգանքով եւ բարի նախանձով, քանի որ բացի սննդակարգից, վեգանությունն առավել գաղափարախոսություն է եւ բնապահպանություն, այդ թվում կենդանիների նկատմամբ հոգատարություն եւ պաշտպանություն:

«Եթե ես ունենայի ուժեղ կամք, այն առումով, որ կանոնավոր կերպով հետեւողական լինեի սննդակարգիս, ես էւս կփորձեի վեգան լինել: Վեգան լինելը երբեք չի վնասում, եթե նույնիսկ չի էլ օգնում: Բայց պետք է ասել, որ վեգան լինելը թանկ է:»
սննդակարգում միս օգտագործող մասնակից

Այսպիսով, բոլոր տասնչորս հարցվողների պնդումներում տեսանելի են մարդու հիմնարար ազատությունները, ազատ ընտրությունները: Մակայն, անդրադառնալով անձանց իրազեկվածությանը, հիմնվելով վերոնշյալի վրա, հստակ է, որ սննդակարգում միս օգտագործող անձինք ավելի քիչ են իրազեկված բնապահպանական խնդիրների, վեգանության, սննդակարգի, բժշկական հարցերի շուրջ, այնինչ վեգանները՝ հիմնականում խորությամբ ուսումնասիրել են սննդակարգերը, վեգանությունը, բնապահպանությունն, ավելին՝ կենդանիների իրավունքների տեսությունը: Տրամաբանական շղթային հետեւելով, տեսնում ենք, որ վեգանության անցնելու մոտիվացիան արդեն իսկ հանգեցնում է այն մտքին, որ դրդապատճառի ձեւավորման մեջ դեր ունեն ոլորտների մասին իրազեկվածությունը, կենդանիների հանդեպ սերը, իսկ վեգանության անցնելը հաճախ ստիպում է մարդկանց ուսումնասիրել սննդակարգը: Այսինքն կարիք է ստեղծվում ուսումնասիրելու ոլորտային հարցերը:

Իսկ սննդակարգում միս օգտագործող անձինք, քանի որ չունեն վեգանության անցնելու մոտիվացիա, եւ չեն անցնում վեգանության, վերելում նշված հարցերն ուսումնասիրելու կարիք չի ստեղծվում: Մակայն, հիմնվելով պատասխանների վրա, հետազոտության արդյունքներում տեսանելի են, որ սննդակարգում միս օգտագործող անձինք եւս նույնականում են բնապահպաններ եւ ուսումնասիրում են ոլորտային հարցերը: Սա կրկին հանգեցնում է այն մտքին, որ վեգանության անցնելու, բնապահպանության դիրքերում հանդես գալը կապված է

անձի հետաքրքրությունների, նախապատվությունների, ցանկությունների ու նախընտրությունների, կարիքների հետ:

Մյուս կողմից շահակից կողմերի միջև գոյություն ունեցող, հետազոտության մեջ զետեղված կոնֆլիկտները կամ խնդիրները էականորեն կապված են իրազեկվածության հարցի հետ:

ԱՌԱՋԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԵՐ

Պետական մարմիններին՝

- Դպրոցական, միջին, բարձրագույն եւ այլ ուսումնական հաստատություններում ու մակարդակներում ներառել անձանց զգայունությանը նպաստող, իրազեկվածությունը բարձրացնող թեմաներ, կամ առարկայական ծրագրեր:
- Հանդես գալ որպես մարդկանց հիմնարար ազատությունների աջակից, եւ խրախուսել մարդու հիմնարար իրավունքները:
- Ներդնել համայնքային, պետական եւ այլ բնապահպանական ծրագրեր, որոնք կարող են նպաստել հատկապես երիտասարդության ներգրավածությանը, իրազեկվածության բարձրացմանը նաեւ հարակից հարցերի շուրջ:

ԱՅԼՈՑ՝

- Հանդես գալ հանդուրժողականության, սոլիդարության մոտեցումներով:
- Հարգել անձանց ինքնորոշման իրավունքները:
- Ձևավորել բարյացկամ, բարիդրացիական եւ խաղաղասիրական մթնոլորտ բոլոր անձանց, ինչպես նաեւ կենդանիների նկատմամբ:
- Ուսումնասիրել կյանքի բոլոր ոլորտներն՝ իրազեկ լինելու համար, որոնք կարող են նպաստել հեշտ կոմունիկացիայի միջոցներ ստեղծելուն եւ կոմունիկացվելուն:
- Ուսումնասիրել աղտոտվածությունը, բնապահպանությունը, կենդանիների ազատությունները, կյանքի իրավունքի ոլորտները:

ՀԱՎԵԼՎԱԾ

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԱԶԸՆՈՒՅՑՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՅՄԱՆ ՀԱՐՅԱՇԱՐ

1. Եթե նույնականանում եք որպես վեզան, հակիրճ ներկայացրեք Ձեր վեզան դառնալու դրդապատճառը: (Եթե ոչ, անցում 2-րդ հարցին) :
2. Ձեզ համարում եք բնապահպան: Եթե նաեւ վեզան ե՞ք, խնդրում եմ համադրեք երկուսը:
3. Ուսումնասիրե՞լ եք վեզանության գաղափարհախոսությունը, կենդանիների իրավունքների տեսությունը, ինչպես նաեւ սննդակարգը կենսաբանականական առումով:
4. Եթե վեզան եք, ներկայացրեք, արդյոք բախվել է խնդիրների սննդակարգում միս օգտագործող անձանց հետ: Եթե ոչ, խնդրում եմ հարցին պատասխանել հակառակ կողմից:
5. Ինչպե՞ս եք վերաբերում վեզաններին, իսկ եթե վեզան եք, ինչպես եք վերաբերում սննդակարգում միս օգտագործող անձանց: